Կ-687³-23.10.2023-ՊԻ-011

ՆԱԽԱԳԻԾ

Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» 2018 թվականի փետրվարի 7-ի ՀՕ-95-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 73-րդ հոդվածում.

1. 3-րդ մասը լրացնել հետևյալ նախադասությամբ. «Սույն օրենքի իմաստով նվեր չեն համարվում ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը:»:

2. 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Դատավորը կարող է ընդունել միայն հետևյալ նվերները.

1) պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաև աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող նվերները կամ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունը.

2) կրթաթոշակը, դրամաշնորհը կամ նպաստը՝ տրված հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով և նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի արդյունքով.

3) օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային նվերները.

4) օրենքով սահմանված դեպքերում որպես պարգևատրում, պետական պարգև կամ խրախուսանքի միջոց տրամադրվող գույքը:»:

3. 6-րդ մասում «1-ին և 4-րդ կետերով» բառերը փոխարինել «1-ին և 3-րդ կետերով» բառերով:

4. 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն հոդվածի 6-րդ և 9-րդ մասերի հիման վրա պետական սեփականություն դարձող նվերները տնօրինվում են «Պետական գույքի կառավարման մասին» օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

Օ Ր Ե Ն Ք

Հոդված 73. Դատավորի կողմից նվերներ ընդունելու սահմանափակումները

1. Դատավորը չպետք է իր պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունի կամ դրանք հետագայում ընդունելու համաձայնություն հայտնի:

2. Դատավորը պետք է միջոցներ ձեռնարկի, որ իր ընտանիքի անդամները և իր հետ փոխկապակցված անձինք չընդունեն նվեր, կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն չհայտնեն, եթե առկա է հնարավոր կամ իրական կապ դատավորի պաշտոնեական պարտականությունների կատարման և ստացված նվերի միջև:

3. Սույն օրենքի իմաստով՝ «նվեր» հասկացությունը ենթադրում է ցանկացած գույքային առավելություն, այդ թվում՝ ներված պահանջը, անհատույց կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով պահանջի զիջումը, անհատույց հանձնված կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով վաճառված գույքը, անհատույց կամ անհամարժեք ցածր գնով մատուցված ծառայությունը կամ կատարված աշխատանքը, ինչպես նաև արտոնյալ փոխառությունը, դրամական միջոցները (կանխիկ, անկանխիկ կամ որևէ այլ ձևով արտահայտված), կրիպտոարժույթը, ուրիշի գույքի անհատույց օգտագործումը կամ այլ գործողություններ, որոնց հետևանքով անձն ստանում է օգուտ կամ առավելություն, և որը տրամադրվում է պայմանավորված անձի (այդ թվում՝ նաև փոխկապակցված անձի) պաշտոն զբաղեցնելու հանգամանքով: Սույն օրենքի իմաստով նվեր չեն համարվում ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը:

4. Դատավորը կարող է ընդունել միայն հետևյալ նվերները.

1) պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաև աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող նվերները կամ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունը.

2) կրթաթոշակը, դրամաշնորհը կամ նպաստը՝ տրված հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով և նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի արդյունքով.

3) օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային նվերները.

4) օրենքով սահմանված դեպքերում որպես պարգևատրում, պետական պարգև կամ խրախուսանքի միջոց տրամադրվող գույքը:

~~4. Դատավորը կարող է ընդունել միայն հետևյալ նվերները.~~

~~1) պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաև աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող նվերները կամ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունը.~~

~~2) ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը.~~

~~3) կրթաթոշակը, դրամաշնորհը կամ նպաստը՝ տրված հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով և նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի արդյունքով.~~

~~4) օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային նվերները:~~

5. Սույն հոդվածի իմաստով՝ «հյուրասիրություն» է համարվում այն նվերը, որն առաջարկվել, տրվել կամ ստացվել է պաշտոնական հարաբերություններ սկսելու, դրանք ամրապնդելու կամ զարգացնելու նպատակով: Այն ընդգրկում է, բայց չի սահմանափակվում ընդունելության, ժամանցային, սոցիալական կամ սպորտային միջոցառումների հրավերներով և առաջարկներով:

6. Եթե սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով ~~1-ին և 4-րդ կետերով~~ նախատեսված նվերի արժեքը (բացառությամբ 1-ին կետով նախատեսված՝ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունների) գերազանցում է վաթսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը, ապա այն համարվում է պետական կամ համայնքային սեփականություն: Դատավորները պարտավոր են սահմանված կարգով այն հանձնել պետությանը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված նվերների արժեքը գնահատվում է՝ հիմք ընդունելով այն ողջամիտ շուկայական արժեքը, որը հնարավոր է գնահատել բաց աղբյուրների միջոցով:

8. Սույն հոդվածի 6-րդ և 9-րդ մասերի հիման վրա պետական սեփականություն դարձող նվերները տնօրինվում են «Պետական գույքի

կառավարման մասին» օրենքով սահմանված կարգով: ~~Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված նվերները տնօրինվում են «Պետական գույքի կառավարման մասին» օրենքով սահմանված կարգով:~~

9. Եթե դատավորն ստացել է նվեր, որը ողջամտորեն կարող է ընկալվել որպես իր պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ տրված, ապա վերջինս սահմանված կարգով անմիջապես, սակայն ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում, հայտնում է Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովին՝ տասնհինգօրյա ժամկետում իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով: Եթե նվերը, Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կողմից ստացված խորհրդատվական կարծիքի համաձայն, հանդիսանում է սույն հոդվածի իմաստով թույլատրելի չհամարվող, ապա դատավորը պարտավոր է ապահովել, որ ստացված նվերը վերադարձվի, կամ վճարվի դրան համարժեք հատուցում խորհրդատվական կարծիքն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում: Եթե սահմանված ժամկետում նվերը վերադարձնելը կամ համարժեք հատուցում վճարելը հնարավոր չէ, ապա դատավորը պարտավոր է սահմանված կարգով նվերը հանձնել պետությանը:

10. Եթե դատավորին հայտնի է դառնում, որ իր ընտանիքի անդամները կամ իր հետ փոխկապակցված անձինք ստացել են նվեր, որը ողջամտորեն կարող է ընկալվել որպես իր պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ տրված, ապա այդ մասին իրեն հայտնի դառնալուց հետո անմիջապես, սակայն ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում, դատավորը սահմանված կարգով հայտնում է Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովին՝ տասնհինգօրյա ժամկետում իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով: Եթե նվերը, Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կողմից ստացված խորհրդատվական կարծիքի համաձայն, հանդիսանում է սույն հոդվածի իմաստով

թույլատրելի չհամարվող, ապա դատավորը միջոցներ է ձեռնարկում, որ ստացված նվերը վերադարձվի, կամ վճարվի դրան համարժեք հատուցում՝ խորհրդատվական կարծիքն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

11. Սույն հոդվածի իմաստով՝ փոխկապակցված անձինք են պաշտոն զբաղեցնող անձի ամուսինը, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը:

12. Նվերների հաշվառման և հանձնման կարգը սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-687-23.10.2023-ՊԻ-011/0), «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-687[1] -23.10.2023-ՊԻ-011/0) ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-687[2] -23.10.2023-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետեր**	«Այն» բառը փոխարինել «գույքը» բառով՝ Նախագծի 1-ին հոդվածում լեզվական հասկացությունների միասնականությունն ապահովելու նպատակով:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	***ՀՀ***	**Նախագծի 1-ին հոդվածի 1-ին**	**«Սահմանված դեպքերում» բառերից հետո լրացնել «և կարգով»**	Ընդունվել է	Ընդունվել է

	կառավարություն	**մասի 3-րդ կետ**	**բառերով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծի 1-ին հոդվածով** «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում լրացվող նոր՝ 25.1-ին հոդվածի 4-րդ մասով Կառավարությանը վերապահված է նաև շուտ փչացող գույքի ոչնչացման կարգը սահմանելու լիազորություն:		
3.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 1-ին հոդվածի 5-րդ մաս**	**Շարադրել հետևյալ խմբագրությամբ.** ««Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա Հայաստանի Հանրապետության սեփականությունը դարձած թանկարժեք մետաղները և թանկարժեք քարերը կարող են հաշվեգրվել Հայաստանի Հանրապետության թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի ազգային պահուստում՝ «Թանկարժեք մետաղների մասին» օրենքով սահմանված կարգով:»: Նշված առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Պետական գույքի կառավարման մասին» և «Թանկարժեք մետաղների մասին» օրենքներում,	Ընդունվել է	Ընդունվել է

			համապատասխանաբար, 11.12.2023թ. ՀՕ-403-Ն և 11.12.2023թ. ՀՕ-400-Ն օրենքների հիման վրա «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի իմաստով պետական գույք են համարվում և նշված օրենքով են տնօրինվում նաև թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը, ինչպես նաև թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված իրերը: Այս կանոնից բացառություն են թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի ազգային պահուստում հաշվեգրվող թանկարժեք քարերը և մետաղները, որոնք տնօրինվում են «Թանկարժեք մետաղների մասին» օրենքով սահմանված կարգով:		
4.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մաս**	«Օրենքով» բառից առաջ նշված «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 3-րդ հոդված**	Հոդվածի վերնագիրը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը:	Ընդունվել է	Ընդունվել է

6.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մաս**	«Մարտի 1-ը» բառերը փոխարինել «հունիսի 30-ը» բառերով՝ Նախագծից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման ժամկետ նախատեսելով 2024 թվականի հունիսի 30-ը՝ հաշվի առնելով Նախագծի՝ երկրորդ ընթերցմամբ քննարկման, ընդունման՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով նախատեսված ժամկետները, ինչպես նաև Նախագծի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ժամկետները:	Ընդունվել է	Ընդունվել է
«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ					
7.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 1-ին հոդված**	Շտկել Նախագծի 1-ին հոդվածի մասերի համարակալումը:	Ընդունվել է	Ընդունվել է
8.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մաս**	««4-րդ» բառը փոխարինել «3-րդ» բառով» բառերը փոխարինել ««1-ին և 4-րդ կետերը» բառերը փոխարինել «1-ին և 3-րդ կետերով» բառերով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասում «4-րդ» բառը կիրառված է երկու անգամ՝ *«4-րդ մասի 1-ին և 4-րդ*		Ընդունվել է

			կետերով», և առկա ձևակերպումից պարզ չէր, թե նշվածներից որն է առաջարկվում փոխել:		
9.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 3-րդ հոդված**	Հոդվածի վերնագիրը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը:	Ընդունվել է	Ընդունվել է
10.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 3-րդ հոդված**	1-ին մասի «, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի» բառերը հանել, իսկ 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 01-Ն որոշման մեջ սույն օրենքից բխող փոփոխությունները կատարվում են մինչև 2024 թվականի հունիսի 30-ը:»: Առաջարկը հիմնավորվում է նրանով, որ Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասով հիշատակվող՝ ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՕ-540-Ն օրենքից բխող համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն արդեն ընդունվել	Ընդունվել է	Ընդունվել է

			են, և այլևս առկա չէ Նախագծի որոշ դրույթներն ուժի մեջ մտնելու ժամկետն այդ ակտերի ընդունման հետ կապելու անհրաժեշտություն: Միաժամանակ, Նախագծի հիման վրա առաջանալու է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի վերը հիշատակված որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն:		
«Պետական արարողակարգի մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ					
11.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 2-րդ հոդված**	2-րդ հոդվածի 1-ին պարբերությունը համարակալել որպես հոդվածի 1-ին մաս, ինչպես նաև հանել 2-րդ Նախադասությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծի 2-րդ հոդվածով հիշատակվող՝ ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի	Ընդունվել է	Ընդունվել է

			դեկտեմբերի 7-ի ՀՕ-540-Ն օրենքից բխող համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն արդեն ընդունվել են, և այլևս առկա չէ Նախագծի որոշ դրույթներն ուժի մեջ մտնելու ժամկետն այդ ակտերի ընդունման հետ կապելու անհրաժեշտություն:		
12.	***ԱԺ պատգամավոր Ալխաս Ղազարյան***	**Նախագծերի փաթեթ**	««Պետական գույքի կառավարման մասին», «Հանրային ծառայության մասին» և «Պետական արարողակարգի մասին» օրենքներում փոփոխություններ կատարելու՝ քննարկվող Նախագծերի փաթեթը **լրացնել** «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին օրենքների նախագծերով, քանի որ նշված սահմանադրական օրենքների, համապատասխանաբար, 73-րդ և 15-րդ հոդվածներում առկա են	Ընդունվել է	Ընդունվել է

			«Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածին նույնական կարգավորումներ, իսկ Նախագծերի փաթեթում ներառված՝ «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծով նախատեսվում է փոփոխություններ կատարել այդ հոդվածում:		